

թիւններից, իսկ այնտեղ հիմք չկայ հաստատելու համար, որ այդ նկարները Վարպետ Մինասին են պատկանում։ Յամենայն գէպս, կարելի է ասել, որ նրանք արդասիք են Հայ նկարչի վրձինի, որովհետեւ Խոչա Նազարի կամ Խոջա Պետրոսի պէս երեւելիներ, պէտք է ենթադրել, որ Հայ նկարիչների ձեռքով են զարդարել իրենց տները. Երկրորդ՝ նկարների մի մասի վրա Հայերէն դրերով դրւած է նկարի անունը,

ինչպէս, օրինակ, բանտի այցելութիւն պատկերացնող մի նկարի վրա կայ «Այցելէ զրանան» մակադրութիւնը. մի ուրիշ անունն է՝ «Տեսանել զիիւանդի՛», մի երրորդ՝ «Արբուցանել զծարաւիս»—պարզ ապացոյց, որ նկարողը Հայ է եղել:

Ս. Խաչատրեանի կատարածը թէ Հայեւ թէ Համամարդկային մշակոյթի համար զնահատելի, արժէքաւոր գործ է :

ՀԱՅ ԳՐՈՂ. ԸՆԿ. ՄՐՑԱՆԱԿԸ

Փարիզի Հայ Գրողների Ընկերակցութեան վարչութիւնը սահմանել է զրական մըցանակ, որի նիւթն է լինելու անտիպ կամ տպագրւած մի վէպ։ Տպագրւած լինելու պարագային պէտք է լոյս տեսած լինի 1 ապրիլ 1934-ից մինչեւ 1934թ. նոյեմբերի վերջը։ Մըցանմին կարող են մասնակցել միայն Ընկերակցութեան անդամները։ Մըցանակի գումարն է 1000 ֆր.։ Նիւթը ներկայացնելու պայմանաժամկը՝ 30 նոյ., 1934թ.։ Ընկերակցութեան հասցէն՝ 261 Fbg. St.- Martin, Paris, 10e.

Մեզ թւում է, որ այս մըցանակը, իր ներկայ ձեւով, եւ անժամանակ է եւ աննպատակայարմար։ Անժամանակ է, որովհետեւ Ընկերակցութեան դրամական միջոցները խիստ սահմանափակ են եւ հազիւ թէ թոյլ տան նման ծախսեր անելու։ Ընկերակցութեան անդամների մի մասի նիւթական վիճակը այնքա՞ն ծանր է, որ Ընկերակցութիւնը եթէ դրամ ունի, ամենից առաջ պարտաւոր է նրանց օգնութեան հասնել տնտեսական տագնապալից այս շըջանը անփորձանք անցնելու համար։ Մըցանակը այսօրւայ պայմաններում պերճանք է :

Երկրորդ՝ մըցանակի կազմակերպութեան ձեւն էլ քննադատելի է։ Հայաբարութեան, միայն Հ. Գր. Ընկերակցութեան անդամները իրաւունք ունին մասնակցելու մըցումին։ Ընկերակցութիւնը ունի չուրբ 60 անդամ (ՏԵ՛ս «Կենանք և Արևեստ», 1934թ. էջ 48)։ Այդ թիւի մօտ երկու երրորդը իր կարողութեամբ կամ վիճակով անընդունակ է վէպ գրելու. ուրեմն, Հ. Գր. Ընկերութեան յայտարարած մըցանակը վաստօրէն 20-25 հոգու համար է։ Աւելի լաւ չէ՞ր, այդ գէպքում, «Պղակի Ընկերակցութեան անդամներին դեմքել եւ հրավարակային հարց չդարձընել։

Մըցումի նշանակութիւնը այն է, առաջապարակ, որ ըստ կարելոյն լայն խաւեր չարժման դրւին եւ նոր ուժեր առաջ քաշւին։ Հ. Գր. Ընկերութեան մըցանակն էլ հանրային որոշ նշանակութիւն կարող էր ունենալ, եթէ ուղղաւած լինէր ամենքին, առանց խորութեան, իսկ զուտ անդամների համար սարքըւած մըցումը՝ հասարակական չնչին արժէք ունեցող մի գործ է՝ անյարմար Հ. Գր. Ընկերութեան անունը կրող մի լուրջ կազմակերպութեան վարկին։